

Գ Ա Ն Կ Օ Ի Ս Ի Ր Տ Ը

Պատաւ Իգերպիւ-ի գրոյցներէց

(Մակսիմ Գոր'կիյ)

Ծովից բարձրանում էր ամպակոյտը, սև, ծանր, մռայլ ձև-
ւերով, լիննաչղթայի նման: Նա սողում էր դէպի դաշտավայրը:
Ամպակոյտի վերին մասից անջատւում էին ամպի կտորներ, նրա-
նից առաջ էին անցնում և հանգցնում աստղերը մէկը միւսի յետե-
ւից: Ծովն աղմկում էր: Մեղնից ոչ հեռու, խաղողի որթերի
մէջ համբուրւում էին, փսփսում ու հառաչում: Խորը դաշտա-
վայրում ոռնում էր մի շուն... Օդը դառնում էր հեղձուցիչ և
մարդու ջղերը գրգռում էր՝ ուռնցիները խաղտացնող մի տարօ-
րինակ հոտով: Ամպից երկրի վրայ էին ընկնում ստուերների
թանձր շարքեր և սողում նրա վրայով, սողում, անհետանում,
նորից յայտնւում... Լուսինը մարել էր, նրա տեղը մնացել էր
միայն օպալի մի պղտոր բլիժ, այն էլ երբեմն ծածկւում էր
ամպի կապտառ կտորով: Եւ դաշտավայրի հեռաստանում, այդ-
ժամ արդէն մութ ու անալի, կարծես տապա արած և իր մէջ
մի բան թաղարած, բռնկւում էին փոքրիկ կապուտակ կրակ-
ներ: Մերթ այստեղ, մերթ այնտեղ մի ակնթարթ յայտնւում
ու հանգչում էին, կ'առես թէ մի քանի մարդ՝ դաշտավայրում
ցրուած իրարից հեռու՝ մի բան էին որոնում նրա մէջ՝ վառե-
լով յուցկիներ, որոնց իսկոյն հանգցնում էր քամին: Դա կրակի
շատ տարօրինակ լեզուակներ էին, որոնք յիշեցնում էին հէ-
քիաթային ինչ-որ մի բան:

— Տեսնում ես զու կայծեր, — հարցրեց ինձ Իգերպիւը:

—Հրէն նրանք, կապոյտները,—նրան մատնացոյց անելով դաշտավայրն՝ ասացի ես:

—Կապոյտները: Հն, այդ նրանք են... Նշանակում է՝ թռչում են էլի... Հա... Ես այ արդէն չեմ տեսնում էլ նրանց: Չեմ կարող այժմ ես չատ բան տեսնել:


—Ո՞րտեղից են այդ կայծերը:—հարցրի պառակից:

Ես առաջ քիչուսմիջ լսել էի այդ կայծերի ծագման մասին, բայց ուզում էի ականջ դնել, թէ պառակ Իզերգլին ինչ կ'ատէ նոյն բանի մասին:

—Այդ կայծերը Դանկօի վառուող սրտից են: Աշխարհիս երեսին մի սիրտ է եղել, որը մի անգամ բռնկուել է կրակով... Եւ անա դրանից են այդ կայծերը: Ես քեզ կը պատմեմ այս բոլորի մասին... էլի հին հէքիաթ է... Հին է էլի, հին է: Տեսնում ես դու, թէ հնուան ինչքան բան կայ... Բայց այ այժմ մի այնպիսի բան չը կայ—նչ գործեր, ոչ մարդիկ, ոչ այնպիսի հէքիաթներ, ինչպէս հնուեր... Ինչու: Ապա մի ասա Չես կարող ասել... Դու ինչ գիտես: Ի՞նչ գիտէք դուք, բոլոր ջահիշներդ: Էհէ-հէ... Մի լաւ մտիկ տայիք հին ժամանակին—այնտեղից ամեն բան կը հասկանայիք... Բայց այ դուք մտիկ չէք տալիս հին ժամանակին, և դրանից է որ չէք կարողանում ապրել... միթէ ես չեմ տեսնում կեանքը: Օ՛խ, ամեն ինչ տեսնում եմ, թէ կուզ վատ էլ են աչքերս! Եւ տեսնում եմ ես, որ մարդիկ չեն ապրում, այլ միշտ այսպէս են փորձում, այնպէս են փորձում յարմարուել և իրանց ամբողջ կեանքը դրա վրայ են դրնում: Եւ երբ իրանք իրանց կը կողոպտեն կը պրծնեն՝ վատնելով ժամանակը, կը սկսեն լալ իրանց բախտի վրայ: Ախր ինչացու է այդտեղ բախտը: Ամեն տեսակ մարդ եմ տեսնում ես հիմա, բայց այ ուժեղներ չը կան! Ապա ուր են նրանք... Գեղեցիկներն էլ քանի գնում՝ քչանում են:

Պառաւը մտածմունքի տակ ընկաւ այն բանի մասին, թէ կեանքից ուր են կորել կորովի և զեղեցիկ մարդիկ, և մտածելով դիտում էր մութ գաշտավայրը՝ ասես նրանում պատասխան որոնելով:

Ես սպասում էի նրա զրոյցին և սուս էի կացել՝ վախենալով, որ եթէ ես նրան որեէ մի խօսք հարցնեմ, նա կրկին կը գրաւուի կողմնակի բանով: Ես պիտէի, որ երբ նա ուզուում է իր յիշողութեանների մերկայոյց ծովը, այդ ծովը նրան փիլիսոփայութիւն է ներշնչում, և յաճախ պատահում էր, որ այս կամ այն լեզենդի վերջաւորութիւնը սնչանում էր այդ փիլիսոփայութեան ճշման տակ, ազատ ու պարզ փիլիսոփայութիւն, սակայն որը պառակ Իզերգլի արտայայտութեամբ ներկայացը-



նում էր բազմերանգ թելերի մի տեսակ տարօրինակ կծիկ, որը խորագիտութեամբ մճճկ էր ժամանակը:

Եւ անա նա սխեց պատմել.

«Հին ժամանակ աշխարհին երեօին աղբում էին մի տեսակ մարդիկ, թէ որտեղ—չը գիտեմ: Միայն գիտեմ, որ այդ մարդկանց բանակները չըջապատում էին երեք կողմից անանցանելի անտառներ, իսկ չորրորդից—դաշտավայր էր: Դրանք ուրախ, ամբախաղմ ու խեղախ մարդիկ էին, շատ բան չը ցանկացող... Եւ անա մի անգամ եկաւ մի ծանր ժամանակ. ինչ-որ մի տեղից յայնուեցին ուրիշ ցեղեր և առաջուաններին քշեցին անտառի խորքը: Այնտեղ ճահիճներ էին ու խաւար, որովհետև անտառը հնօրեայ էր, և նրա ծառերի ճղներն այնպէս խիտ էին հիւսուել, որ նրանց արանքով չէր երևում երկինքը, և արևի շողերը հազիւ էին կարողանում խիտ սաղարթի միջով իրանց համար ճանապարհ բանալ դէպի ճահիճը: Իսկ երբ նրա շողերն ընկնում էին ճահիճների ջրի վրայ, այն ժամանակ էլ բարձրանում էր գարչահոտութիւն, և մարդիկ նրանից կտտրուում էին մինը միւսի յետևից: Այն ժամանակ սխեցին այդ ցեղի կիներն ու մանուկները լաց լինել, իսկ հայրերը մտքի տակ ընկան ու սրանեղուեցին: Պէտք էր հեռանալ այդ անտառից, և դրա համար կար երկու ճանապարհ. մէկը—ետ,—այնտեղ էին զօրեղ ու չար թշնամիները, միւսն առաջ,—այնտեղ կանգնած էին հըսկայ-ծառերը՝ իրար կիպ զրկած հզօր ճղներով և խորը գցած իրանց հանգուցաւոր արմատները ճահճի կպչուն տղմի մէջ: Այդ ծառերը ցերեկը կանգնած էին գօրշ աղօտութեան մէջ լուռ ու անշարժ, ինչպէս քարէ, և այն մարդկանց աւելի կիպ էին շրջապատում երեկոներին, երբ վառում էին խարոյկները: Եւ միշտ, գիշեր-ցերեկ, այդ մարդկանց շուրջը կար թունդ խաւարի մի օղ, որը կարծես պատրաստում էր խեղդելու նրանց, որ սովոր էին դաշտային ընդարձակութեան ու լոյսի: Բայց աւելի սարսափելի էր լինում այն ժամանակ, երբ քամին հարուածում էր ծառերի կտաւներն ու օղջ անտառը խուլ դղրդում էր, ասես սպառնում ու մահերգ էր երգում այն մարդկանց համար, որոնք պատսպարուել էին նրանում թշնամիներից: Դրանք՝ որքան էլ չը լինի՝ ուժեղ մարդիկ էին և կը կարողանային գնալ ճակատամարտել մահացու կերպով նրանց հետ, որ մի անգամ իրանց յաղթել էին, բայց նրանք չէին կարող մեռնել ճակատամարտերում, որովհետև կտակներ ունէին, և եթէ որ մեռնէին, այն ժամանակ նրանց հետ կը կորչէին կեանքից և՛ այն կտակները: Ուստի և նրանք նըստում ու մտածում էին երկար գիշերներն անտառի խուլ աղ-

մուկի տակ, ճահճի թունաւոր զարշահոտութան մէջ: Նրանք նստում էին, իսկ խարոյկներէն առաջացած սառեւրները նրանց չուրջն անմուռնչ պար էին սարքում, և ամենքին թւում էր, թէ այդ ոչ թէ ստուերներն են պարում, այլ հանդէս են սարքել անտառն ու ճահճի չար ուղիները... Մարդիկ հէնց էն է նստում ու մտածում էին: Բայց ոչինչ—նչ աշխատանքը, նչ կիները—չեն մաշում մարդկանց մարմիններն ու հոգիներն այնպէս, ինչպէս մաշում են վշտաւ խոհերը, որ ծծում են սիրտն օձերի նման: Եւ մարդիկ թուլացան խոհերից... Նրանց մէջ դոյացաւ երկիրը, չղթայեց նրանց ամուր ձևները, կիները զարհուրանք առաջացրին իրանց լացով՝ զարշահոտութիւնից մեռած դիակների և ահից կաշկանդուած կենդանի մարդկանց վիճակի վրայ,— և անտառում սկսեցին լսուել անարի խօսքեր, նախ երկչոտ ու մեղմ, իսկ յետոյ աւելի ու աւելի բարձր... Արդէն ուղում էին գնալ թշնամու մօտ և նրան նուէր բերել իրանց և իրանց ազատ կամբքը, ոչ ոք արդէն՝ մահից ահարկուած՝ չէր վախենում ստրկական կեանքից... Բայց այդտեղ լոյս ընկաւ Դանիօն և մենակ փրկեց ամենքին:»

Երևում էր որ պառաւը յաճախ էր պատմել Դանիօի վառուող սրտի մասին. ֆրագները զուրս էին գալիս երկար ու հարթ ժապաւէնի պէս: Նա խօսում էր երգաձայն, և նրա ձայնը՝ ճոճոճան ու խուլ՝ պարզ պատկերացնում էր իմ առաջ այն անտառի աղմուկը, որի մէջ ճահճի թունաւոր ժահահոտութիւնից մեռնում էին դժբախտ, հալածուած մարդիկ...

«Դանիօն—դա այն մարդկանցից մէկն էր, մի ջահիլ գեղեցիկ մարդ: Գեղեցիկները—միշտ խիզախ են: Եւ ահա նա ստում է նրանց, իր ընկերներին.

—«Միտք անելով չենք կարող զրորուող քարի ճանապարհը ծռել: Ով ոչինչ չէ անում, նրան ոչինչ չի լինիլ: Ի՞նչ ենք մենք ոյժներս վատնում մտածմունքի ու վշտի վրայ: Վեր կացէք, գնանք անտառը և անցնենք նրա միջից, նա մի ծայր հօ կ'ունենայ—աշխարհումս ամեն բան ծայր ունի! Գնանք: Ապա: Հէյ...»

«Նայեցին նրան ու տեսան, որ նա ամենից լաւն է, որովհետև նրա աչքերում փայլում էր շատ ոյժ ու կենդանի կրակ:

—«Առաջնորդիր դու մեզ,»—ասացին նրանք:

«Այն ժամանակ նա առաջնորդեց...»

Պառաւը լռեց ու նայեց դաշտավայրին, ուր քանի գնում՝ թանձրանում էր խաւարը: Դանիօի վառուող սրտի կայծերը

բանկուում էին հետու մի տեղ և թւում էին օդային կապոյտ ծաղիկներ՝ միայն մի ակնթարթի համար ծաղկած:

«Առաջնորդեց նրանց Դանկօն: Ամենքը համերաշխ գնացին նրա յետեից—հաւատ ունէին նրա վրայ: Դա մի դժուար ճանապարհ էր: Մութ էր, և իւրաքանչիւր քայլափոխում ճահիճը բաց էր անում իր ժանտ անյալ երախը՝ կլանելով մարդկանց, և ծառերը կտրում էին ճանապարհը զօրաւոր պատիճման: Խրճճուել էին նրանց ճղներն իրար հետ որպէս օձեր, տարածուել էին ամեն կողմ արմատները, և իւրաքանչիւր քայլը շատ արեւն-քրտինք էր նստում այդ մարդկանց վրայ: Նրանք երկար ժամանակ գնում էին... Մնասորը քանի գնում՝ խոտանում էր, ոյժերը քանի դնում՝ նուազում էին՝ Եւ անա նրանք սկսեցին արանջալ Դանկօի վրայ՝ ասելով, որ դուք է նա՛ ջահիլ ու անփորձ՝ բերել նրանց ինչ-որ մի ակղ: Իսկ նա գնում էր նրանց առջևից և աշխոյժ ու պայծառ էր:

«Բայց մի անգամ մըրիկ վեր կացաւ անտառի վրայ, և ծառերը սօսաւեցին խուլ ու սպառնաղինս Եւ այն ժամանակ անտառն այնպէս մթնեց, որ կ'ասես թէ նրա մէջ էին ժողովուել միանգամից բոլոր գիշերները, որքան որ եղել է աշխարհիս երեսին այն ժամանակուանից, երբ նա դոյացել է: Գնում էին փոքրիկ մարդիկը մեծ-մեծ ծառերի ու շանթի խրոխտ աղմուկի միջով, գնում էին նրանք, և հսկայ-ծառերը ճօճուելով՝ ճօճուում ու որոտում էին զայրագին երգեր, իսկ կայծակները թռչելով անտառի ծառակատարներէ վրայով լուսաւորում էին նրան մի վայրկեան կապոյտ, սառ կրակով ու անյայտա՛նում նոյնպէս արագ, ինչպէս յայտնում էին՝ մարդկանց վախացնելով: Եւ ծառերը լուսաւորուած կայծակի սառ կրակով՝ թւում էր թէ կենդանի են, խաւարի գերութիւնից հետացող մարդկանց շուրջն են տարածում իրանց ծուռումուռ, երկար ձեռները, նրանցից հիւսելով մի խիտ ցանց և աշխատելով կանգնեցնել մարդկանց: Իսկ ճղների խաւարի միջից ինչ-որ սարսափելի, մութ ու ցուրտ մի բան էր նայում ընթացողներին: Դա դժուար ճանապարհն էր, և մարդիկ նրանից յոգնած՝ յուսահատուել էին: Բայց նրանք ամաչում էին խստովանուել իրանց անզօրութիւնը, և անա իրանց չարութիւնն ու զայրոյթը թափեցին Դանկօի վրայ, այն մարդու, որը գնում էր նրանց առջևից: Եւ սկսեցին նրանք մեղաբերել նրան իրանց կառավարել չը կարողանալու համար,—այ թէ ինչ:

«Կանգ առան նրանք և անտառի յաղթական աղմուկի տակ, դողացող խաւարի մէջ, յոգնած ու չար՝ սկսեցին դատել Դանկօին:

—«Դու,—ասացին նրանք,—չնչին ու վնասակար մարդ ես մեզ համար! Դու մեզ առաջնորդեցիր և յոգնեցրիր, և դրա համար դու կը մեռնես!»

«Եւ շանթն ու որոտը հաստատեցին նրանց վճիռը:

—«Դուք ասացիք՝ «առաջնորդէր»—եւ էլ առաջնորդեցի! —դուք Դանկօն՝ կուրծքը նրանց դէմ անելով:—Ես արիութիւն ունեմ առաջնորդելու, ուստի և ահա ես ձեզ առաջնորդեցի! Իսկ դուք: Դուք ինչ արիք ձեզ սաստար լինելու համար: Դուք միայն դնում էիք և չէք կարողանում արիութիւն պահպանել աւելի երկար ճանապարհի համար: Դուք միայն դնում էիք, գնում էիք ձեզ ու ձեզ՝ ինչպէս մաքրիներին հօտ!»

«Բայց այս խօսքերն աւելի ևս կատաղեցրին նրանց:

—«Դու կը մեռնես: Դու կը մեռնես, մոնչում էին նրանք:

«Իսկ անտանն անդադար թնդում էր հա թնդում՝ կրկնելով նրանց գոչումները, և շանթերը պատառ-պատառ էին անում խաւարը: Դանկօն նայում էր նրանց, որոնց սիրուն դժուար աշխատանք էր յանձն առել, և տեսնում էր, որ նրանք դադանների պէս են: Նրա չուրջը շատ մարդ էր կանգնած, բայց նրանց դէմքերին չը կար վեհանձնութիւն, և չէր կարելի նրանցից գլխութիւն սպասել: Այն ժամանակ նրա սրտում էլ եռաց ցատումը, բայց դէպի մարդիկն ունեցած խղճահարութիւնից հանդու այնու նա սիրում էր այդ մարդկանց և մտածում էր, որ դուքէ առանց իրան կը կորչեն նրանք: Եւ ահա նրա սիրալը բռնկուեց նրանց վրակելու և դիւրին ճանապարհը դուրս բերելու վառ կրակից, և այն ժամանակ նրա աչքերում շողացին այդ մեծազօր կրակի ճառագայթները... Եւ նրանք տեսնելով այդ՝ կարծեցին, թէ նա կատաղել է, որից և այդպէս պայծառ վառուեցին նրա աչքերը, և նրանք սկսեցին զրուշանալ՝ ինչպէս դայիք՝ սպասելով, որ նա մարտնչելու է նրանց հետ, և աւելի կիպ չըջապատեցին նրան, որպէսզի իրանց համար հեշտ լինի բռնել ու սպանել Դանկօին: Իսկ նա արդէն հասկացել էր նրանց միտքը, ուստի և աւելի պայծառ վառուեց նրա սիրտը, որովհետև նրանց այդ միտքը առաջ էր բերել նրա մէջ վիշտ:

«Իսկ անտանն անդադար երգում էր իր մասյ կրգը, և որոտը որոտում անդադար, և անձրև էր թափում...»

—«Ի՞նչ կարող եմ անել ես մարդկանց համար,—որոտից աւելի ուժգին գոչեց Դանկօն:

«Եւ յանկարծ ձեռներով նա պատուեց իր կուրծքը և հանեց նրանից իր սիրտն ու բարձրացրեց այն իր գլխից վեր:

«Եւ նա վառվում էր այնպէս լուսապայծառ, ինչպէս արևը, արևից էլ պայծառ, և ամբողջ անտառը լսեց՝ դէպի մարդիկ

տածած մեծ սիրոյ այդ ջանքով լուսաւորուած, իսկ խաւարը ցըրուեց նրա լոյսից և այնտեղ, խորն անտառում, դողդոջին, ներս ընկաւ ճահճի ժահահոտ երախը: Իսկ մարդիկ հիացած՝ քար էին կտրել:

— Գնանք, — գոչեց Դանկօն, և նետուեց առաջ իր տեղը՝ բարձր բռնած վառուող սիրտը և լուսաւորելով նրանով մարդկանց ուղին:

«Նրանք նետուեցին նրա յետևից՝ հետաքրքրուած ու կախարգուած: Այն ժամանակ նորից անտառն աղմկեց՝ զարմացած ձօճելով ծառակատարները, բայց նրա աղմուկը խլացուեց վազող մարդկանց ոտների թմբիթմիտոցից: Ամենքն էին վազում արագ ու համարձակ, յափշտակուած վառուող սրտի հրաշալի տեսարանով, Այժմ էլ էին կոտորուած, սակայն կոտորուած էին առանց գանդառների ու արցունքների, իսկ Դանկօն առջևն էր միշտ, և նրա սիրտը վառուած էր հա վառուած:

«Եւ ահա յանկարծ անտառը ետ քաշուեց նրանց առաջից, ետ քաշուեց ու ետ մնաց, կիսկ ու համր, իսկ Դանկօն ու բոլոր այն մարդիկ յանկարծ ընկղմուեցին արեգակային լոյսի ամբողջ ծովի ու ջինջ, անձրևից լուացուած օդի մէջ: Մրրիկ էր այնտեղ, նրանց յետևում, անտառի վրայ, իսկ այստեղ փայլում էր արևը, շնչում էր դաշտավայրը, փայլում էր խոտը անձրևի ադամանդներով, և գետը շողջողում էր ոսկու նման... Երեկոյ էր, և արևմուտքի ճառագայթներից գեաը թւում էր կարմիր, ինչպէս այն արիւնք, որ ջերմ հոսանքով խփում էր Դանկօի պատառուած սրտից:

«Հայեացք գցեց իր առաջ՝ դաշտավայրի լայնարձակութեանը՝ հպարտ, մեռնող քաջասիրտ Դանկօն, ուրախական հայեացք գցեց նա աղատ երկրի վրայ և հպարտ ծիծաղեց: Իսկ յետոյ ընկաւ ու մեռաւ:

«Մեղմ շնջում էին զարմացած ծառերը, որոնք յետևն էին մնացել, և խոտը, որ թրջուել էր Դանկօի արիւնով, ձայնակցում էր նրանց:

«Իսկ մարդիկ ուրախ և լի յոյսերով՝ չը նկատեցին նրա մահը և չը տեսան, որ դեռ վառվում է Դանկօի դիակի մօտ նրա խիզախ սիրտը: Միայն մի գգոյշ մարդ նկատեց այդ և վախենալով ինչ-որ մի բանից՝ ոտը դրաւ հպարտ սրտին... Եւ ահա նա ցրիւ գալով ու կայծեր դառնալով մարեց...»

— Այ թէ որտեղից են նրանք, դաշտավայրի կապուտակ կայծերը, որոնք յայտնուում են մրրկից առաջ!

Այդ ժամանակ, երբ պառաւը վերջացրեց իր գեղեցիկ հէքիաթը, դաշտավայրում տիրեց խաղաղութիւն, կ'ասես նա էլ էր ապշած քաջարի Դանկօի ուժից, որը մարդկանց համար վառեց իր սիրտն ու մեռաւ՝ նրանցից ոչ մի պարգև չը ինդրելով իր համար: Մէջքը դէմ տուած խաղողով լի կողովին՝ պառաւը նիրհում էր: Ես նայում էի նրան ու մտածում. դեռ որքան հէքիաթներ ու յիշատակներ են մնացել նրա յիշողութեան մէջ: Եւ մըտածում էի Դանկօի վառուող մեծ սրտի և մարդկային ֆանտազիայի մասին, որ ստեղծել է այդքան գեղեցիկ ու ազդու լեզներգներ, նախնի ժամանակի մասին, որում կային հերոսներ և սխրագործութիւններ, և տխուր ժամանակիս մասին, աղքատ՝ կորովի մարդկանցով ու խոշոր դէպքերով, հարուստ՝ ամեն բանի վրայ ծիծաղող սառն անվատահոլութեամբ,—ի ծնէ մեռած սրտերով ողորմելի մարդկանց ժամանակիս մասին:

Քամին փչեց և ցնցոտիների տակից մերկացրեց՝ աւելի ու աւելի խորը քնող պառաւ Իգերդիլի չոր կուրծքը: Ես ծածկեցի նրա ձեռք մարմինը և ինքս պառկեցի գետնին նրա մօտ: Դաշտավայրում խաղաղ ու մութ էր: Երկնքով էլի սողում էին ամպերը, դանդաղ, ձանձրալի... Ծովն ազմկում էր խուլ ու վշտագին:

Թարգմ. ԱՐՇԱԿ Ա.ԹԱՅԵԱՆ